

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱԳՐԻ ՀԻՇԱՏԱԿԱԾ ՀՈՒՆԱԿԱՆ ԱՐԵՎ ԶԱՂԱՔԻ ԽՆԴԻՐԸ¹

Բանալի բառեր՝ *Մովսես Խորենացի, Վարազդատ, Արեգ, Հելիոպոլիս (Իլիոպոլիս), Հունաստան, Եգիպտոս, Լիբանան, օլիմպիական խաղեր, էլիս (Իլիս):*

Պատմահայր Մովսես Խորենացին «Պատմութիւն Հայոց» Գ գրքի *և գլխում («Յաղագս թագաւորելոյն Վարազդատայ, և կապանաց նորին»)* անդրադառնալով Մեծ Հայքում Վարազդատի թագավորելուն՝ նշում է Հունաստանի օլիմպիական խաղերին նրա մասնակցութեան և հաջողութիւնների մասին. «Այս Վարազդատ էր տիով մանուկ, սրտեայ, անձնեայ, ուժեղ, լի ամենայն գործով արութեան, և յոյժ կորովի նեաւձգութեամբ: Որ ի ժամանակի ի փախստենէն Շապհոյ գնացեալ ի դուռն կայսեր նահատակեցաւ, նախ ի Պիսաս զընամարտիկսն յաղթելով. դարձեալ յԱրեգ քաղաքի Ելլադացոց² յօր հասարակի կռառեաց առիծս³, յորում փառս Ողոմպիայ խաղուն հանդիսի յըմբշամարտկացն երևի և յարգի»⁴:

* ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ԵՊՀ, ք.գ.թ., samvel.ramazyan@ysu.am, հոդվածը ներկայացնելու օրը՝ 20 օգոստոսի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 20 նոյեմբերի, 2025:

¹ Շնորհակալությունս եմ հայտնում Գոհար Մուրադյանին, Արմեն Պետրոսյանին և Նիկոլաոս Գրամատիկոպոստին՝ կատարած դիտողությունների համար:

² 1695 թ. Ամստերդամում Թովմաս Վանանդեցու առաջին իսկ հրատարակության մեջ առկա է որոշ տարրմթերցում՝ «ի Յարէգ քաղաքի Հելլադացոց» (Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան յօրինեցեալ ի Մովսիսէ Խորենացոյ, Վէնէտիկ, 1695, էջ 380), ինչը կրկնվել է նաև 1752 թ. Վենետիկի հրատարակության մեջ (Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան յօրինեալ ի Մովսիսէ Խորենացոյ, Վէնէտիկ, 1752, էջ 349):

³ 93-րդ օլիմպիական խաղերում առյուծների դեմ մարտերի մասին է հիշատակում Գ-Դ դդ. պատմիչ Եվսեբիոսը: Մասնավորապես, նշվում է Պոլիդամաս Սկոտուսացին, որ «երթեալ կոտորէր առեւծս» (Եւսեբի Պամփիլեայ Կեսարացոյ Ժամանակականք երկմասնեայ, Մասն Ա, Վէնէտիկ, Ս. Ղազար, 1818, էջ 139):

⁴ Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 307-308:

Արեգ քաղաքի մասին այլ հիշատակություններ հորենացին չունի: Ի տարբերություն հորենացու տվյալ հաղորդման՝ Փավստոս Բուզանդը որևէ համանման փաստ Վարազդատի առնչությամբ չի հիշատակում:

Ընդունված է, որ Արշակունիների տոհմից սերող Վարազդատը Մեծ Հայքում թագավորել է 374-378 թթ., ապա ծագած ապստամբության արդյունքում հեռացել Հռոմեական կայսրություն: Մինչ այդ և դրանից հետո էլ օլիմպիական խաղերը Հունաստանում շարունակվում էին, փաստագրված վերջին խաղերն անցկացվել են Թեոդոսիոս Ա Մեծ կայսեր օրոք մինչև 394 թ.: Հարցին անդրադարձած հեղինակների մի մասը հավանական է գտնում, թե Վարազդատը մասնակցել է 369 թ. Օլիմպիայում կայացած 287-րդ օլիմպիական խաղերին⁵ և, հետևաբար, հաղթող է հռչակվել մինչ թագավորելը⁶: Մյուսների կարծիքով, Վարազդատը մասնակցել է 385 թ. կայացած 291-րդ խաղերին, այսինքն՝ գահընկեց լինելուց և Հռոմեական կայսրություն վերադառնալուց հետո⁷, ինչն առավել հավանական է նաև հնագիտական բնույթի նոր տեղեկությունների ի հայտ գալու հաշվառմամբ:

Հորենացու հիշատակած Պիսան հանրահայտ է և անվիճարկելի՝ այն Պելոպոնեսոսի թերակղզում գտնվող օլիմպիական վայրերից էր, բուն Օլիմպիայից մոտ 2 կմ արևելք (հին հուն. Πίσσα)⁸: Բնագրում «**ի Պիսաս**» ձևը նշված է հունարենի հոգնակի հայցական հոլովի վերջավորությամբ, ինչպես ժամանակին նկատել է Ստեփան Մալխասյանցը⁹: Կալլիսթենեսին վերագրված «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» երկի հին հայերեն թարգմանության մեջ տասնհինգամյա Ալեքսանդրը հորը խնդրում է «**նաւել ի Պիսաս**», օլիմպիական խաղերին մասնակցելու նպատակով¹⁰:

Այլ է «Արեգ քաղաքի» պարագան, քանի որ այն հունարենից կատարված թարգմանության արդյունք է, հետևաբար հունարեն նախաձևը պետք է որ լիներ Հելիոպոլիս (Ηλιοπόλις): Սակայն Հին Հունաստանում նման անվամբ որևէ քաղաք հայտնի չի եղել: Միայն ներկա Հունաստանում տվյալ անվամբ հայտնի

⁵ N. Wilson, *Encyclopedia of Ancient Greece*, Routledge, New York-London, 2006, p. 515.

⁶ Կ. Աթոյան, Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնագույն ակունքները Հայաստանում, Երևան, 1985, էջ 259-260:

⁷ Մ. Իսախյան, Հայ մարզիկների մասնակցությունը հին հունական օլիմպիական խաղերին, ԼՀԳ, 1, 2000, էջ 192-194:

⁸ Ավանդության համաձայն, պիսացի վերաբնակիչներն են Իտալիայում հիմնել առավել հայտնի համանուն Պիզա (լատ. Pisa) քաղաքը:

⁹ Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 362:

¹⁰ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, Վենետիկ, Ս. Ղազար, 1842, էջ 23-24, Պատմութիւն Մեծին Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, բնագիրը հրատարակության պատրաստեցին, ծանոթագրեցին և առաջաբանը գրեցին Գ. Մուրադյանը և Ա. Թովչյանը, Երևան, 2025, էջ 91:

է Ատտիկայի մարզում գտնվող Աթենքի հարավային արվարձաններից մեկը՝ հնագույն աթենական էվոնիմիա դեմոսը: Արդի Իլիուպոլիսը (*Ηλιούπολη*) 1923 թ. հիմնվել է փոքրասիական աղետից հետո վերաբնակված գաղթականների կողմից և այդպես կոչվել ի պատիվ եգիպտոսի համանուն քաղաքի: Մեր օրերում նմանապես հայտնի է Սալոնիկի համանուն արվարձանը:

Հին աշխարհի Հելիոպոլիս անվամբ բաղաձայնները

Հին աշխարհում Հելիոպոլիս անվամբ դեռևս հելլենիստական ժամանակահատվածից առավել հայտնի է եղել երկու քաղաք, որոնցից հռչակավորը՝ Նեղոսի հովտում, Ներքին եգիպտոսում, ներկայիս Կահիրեի արվարձաններից է: Տեղում երկար ժամանակ գոյություն է ունեցել եգիպտական դիցաբանության Ռա (Աթում-Ռա) արևի աստվածուհիյան պաշտամունքը, ինչի արդյունքում հին հույներն այն նույնացրել են Հելիոսի (հուն. *Ἥλιος*, հոմերոսյան հուն. *Ἥέλιος*) հետ և քաղաքն անվանել ուղղակի «Արևի քաղաք»: Պատմահայր Հերոդոտոսից սկսած հույն հեղինակներն այս Հելիոպոլիսի հետ են կապում արծվանման փյունիկ սրբազան թռչնի ավանդազրույցը, որը 500 տարին մեկ Արաբիայից թռչում և գալիս է Հելիոսի տաճար¹¹: Ընդհանրապես, փյունիկը որպես մեռնող և վերածնվող թռչուն, եգիպտական դիցաբանության մեջ հարուստ և Հելիոպոլիս խորհրդանշել էր: Ռաի կամ Հելիոսի տաճարը կապակցվում էր նաև քրմական գիտության հետ, Հերոդոտոսի խոսքերով՝ «ասում են, թե հելիոպոլսեցիները ամենախելամիտներն են եգիպտացիների մեջ»¹²: Հետաքրքիր է Հելիոպոլիսի և հունական Պիսայի համաժամանակյա համեմատական հիշատակությունը Հերոդոտոսի Բ գրքում. «Մովից դեպի Հելիոպոլիս բարձրացող ճանապարհը մոտավորապես այնքան է, ինչքան Աթենքի տասներկու դից զոհաբանից մինչև Պիսա, հատկապես մինչև Օլիմպոսյան Զևսի տաճարը»¹³: Մույն և հաջորդող նկարագրությունը զուտ տարածաշափական բնույթի է և Խորենացու վերը նշված հաղորդմանը չի առնչվում:

Երկրորդ Հելիոպոլիսը Լիբանանում գտնվող Բաալբեկի անվան հունարեն տարբերակից է, քանի որ հին հույները Բահաղին (Բեկ-Բելոս) սովորաբար նույնացրել են Հելիոսի հետ (երբեմն նաև Զևսի): Այս քաղաքն առավել հայտնի էր որպես «Փյունիկիայի Հելիոպոլիս»: Ք. հ. Ա դ. հռոմեական նվաճումից հետո տեղում հիմնված գաղութը հիշատակվել է որպես *Colonia Augusta Felix*

¹¹ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, էջ 115-116:

¹² Նույն տեղում, էջ 90:

¹³ Նույն տեղում, էջ 91:

*Heliopolitana*¹⁴: Հայտնի է, որ 306 թ. տեղում նահատակվել է Ընդհանրական եկեղեցու սրբերից ս. Վարվառան¹⁵, որի մասունքներն ամփոփվել են քաղաքի մերձակայքում մինչև 2 դ. (վարքաբանական գրականության մեջ երբեմն նշվում է որպես ս. Վարվառա Իլիոպոլսեցի): Եգիպտոսի Հելիոպոլսից տարբերելու համար քաղաքը երբեմն նշվել է որպես Փյունիկիայի, Լիբանանի կամ Անտիոքի Հելիոպոլիս: Տվյալ Հելիոպոլսի ավերակները ներկայումս գտնվում են Բեյրութից 65 կմ հյուսիս-արևմուտք:

Ամեն դեպքում նշված երկու քաղաքն էլ Հունաստանից դուրս են և որևէ կերպ չեն կարող առնչվել Խորենացու հիշատակած օլիմպիական քաղաքին:

Հարկ է նշել, որ առժամանակ Հելիոպոլիս է կոչվել Ք. ա. Ա հազարամյակում հույն գաղութաբնակների կողմից Թրակիայի սևծովյան մասում հիմնված քաղաքը, նախկին Թրակիական Նավոխոս բնակավայրի տեղում (ներկայիս Օբզոր քաղաքը, Բուլղարիայի Բուրգասի շրջանում): Վստահաբար, քաղաքի անվանումը կապակցվել է Հելիոսի պաշտամունքին, սակայն Ք. ա. Ա դ. հռոմեական նվաճումից հետո տեղում կառուցվել է Յուպիտերի տաճար, ինչի արդյունքում քաղաքը վերանվանվել է *Templum Iovis* (լատ. «Յուպիտերի տաճար»): Քրիստոնեության հաստատումից հետո Դ-6 դդ. քաղաքն առժամանակ վերանվանվել է Թեոպոլիս, հուն.՝ «Աստծո քաղաք»¹⁶:

Հայտնի է եղել ևս մեկ Հելիոպոլիս ներկայիս Բուլղարիայի Բլագոևգրադի շրջանի Ռավոգ համայնքի էլեշնիցա գյուղի մերձակայքում: Մասնավորապես, նշվում է Էլիոս անվամբ ամրոցը (այժմ՝ ավերակ), որը հետագայում կոչվել է նաև Իլիոպոլ և Նիբուշ (Նեբուշ)¹⁷:

Ամեն դեպքում նշված բնակավայրերը, որպես Հելիոպոլիս հանրահայտ չեն եղել հունահռոմեական և, ընդհանրապես, Հին աշխարհի մատենագրության մեջ՝ ի տարբերություն անտիկ հեղինակների (Ստրաբոն, Պտղոմեոս, Պլինիոս Ավագ, Հովսեպոս Փլավիոս ևն) հիշատակած Եգիպտոսի և Լիբանանի (Փյունիկիայի) «Հելիոպոլիս» անվամբ քաղաքների: Առավել ևս, զրանցից և ոչ մեկում օլիմպիական խաղեր չեն անցկացվել:

¹⁴ Полный православный богословский энциклопедический словарь. Т. 1, СПб, 1913, стб. 1120.

¹⁵ Վարք սրբոց, հ. Դ, Ս. Էջմիածին, 2010, էջ 184, J. P. Kirsch, “St. Barbara”, *The Catholic Encyclopedia*, Vol. 2, New York, Robert Appleton Company, 1907, p. 741:

¹⁶ П. Делирадев, Принос към историческата география на Тракия. Т. 1, Издание на Българската академия на науките, София, 1953, с. 192; X. Стоева, Легенди и предания за българското черноморие. «Славена», Варна, 1999, с. 77.

¹⁷ Բուլղար հեղինակների կողմից համիրավի փորձեր են արվել ս. Վարվառայի նահատակության վայրը նույնացնել նշված բնակավայրի հետ (В. Каравълчев, *Св. Варвара Илиополска - по следите на едно предание*, «Християнство и история», бр. 4 (71), 2012, с. 87-124):

Արեգի առնչությամբ Խորենացու այլ հիշատակությունները

Խորենացին ինքն այլ առիթներով նշում է «Արեգակն» անունը, որպես հունական Հելիոսի հայերեն համարժեք։ Մասնավորապես, Ա գրքի է գլխում. «**որպես Եգիպտացիք թունե հաւասար Մովսիսի՝ Հեփեստոս, Արեգակն, Կոռնոս, որ է Քամ, Քուշ, Նեբրովթ, քողեալ զՄեսարայիմ**»¹⁸։

Բ գրքի ԺԹ գլխում Խորենացին հիշատակում է հայոց սպարապետ և Ռշտունյաց նահապետ Բարզափրանի երդումն ի հավաստումն հրեից իշխանավորի խնդրած երաշխիքների. «**Երդնու նմա յարեգակն և ի լուսին և յամենայն պաշտամունս իւրեանց երկնայինս և երկրայինս, և յարև Արտաշէզի և Տիգրանայ**»¹⁹։ Բավական հատկանշական է զույգ բառերի («արեգակն» և «արև») գործածումը միևնույն հատվածում, ինչով փաստվում է Արեգակի աստվածություն լինելը։ ԻՊ գլխում նշվում է հայոց Արշամ թագավորի պատվերը թագակապ ասպետ Նևանոսին՝ «**թողոյ ի սպառ զօրէնս հրէութեան, և երկիր պագանել արեգական, և պաշտել զկոտս արբայի**»²⁰։ Արեգակը, փաստորեն, արքայական երկրպագության առարկան էր։

Բ գրքի Հէ գլխում Մեծ Հայքում և մասնավորապես Արմավիրում, արեգակի պաշտամունքի հետ կապված նշվում է հետևյալը. «**Բայց զանդրիսն, զոր արար Վաղարշակ պատկեր իւրոց նախնեացն հանդերձ արեգակամբ և լուսնի յԱրմափր, և փոխեցան յԱրմաւրայ ի Բագարան և դարձեալ յԱրտաշատ՝ զայնոսիկ փշրէ Արտաշիր**»²¹։ Սա արդեն միանշանակ հելլենիստական ոճով է, քանի որ հունական և հելլենիստական քաղաքներում ընդունված էր արեգակի և լուսնի աստվածությունների՝ Հելիոսի և Սելենի արձանների տեղադրումը հեթանոսական տաճարների տարածքում (եղբայր և քույր, ըստ հունական դիցաբանության)։ Նույնիսկ Աթենքի Պարթենոնի տաճարում նրանց քանդակները միևնույն սկզբունքով են տեղադրվել²²։

Վերոհիշյալ հատվածի վրա հիմնվելով Ղևոնդ Ալիշանն իրավամբ ենթադրում է, որ «այս անդրիք դիցական կամ մարդակերպ էին, և որպես թուփ կիսաշափ, այսինքն մինչև ի կէս կամ մէջք մարդոյ ձևացեալ»²³։ Արձանների պատրաստումը Խորենացին վերագրում է Վաղարշակ թագավորին, հետագայում դրանք, փաստորեն, փոխադրվում են Բագարան և Արտաշատ, վերջում՝ ոչնչացվում պարսից Արտաշիր թագավորի կողմից։

¹⁸ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 27։

¹⁹ Նույն տեղում, էջ 134։

²⁰ Նույն տեղում, էջ 140։

²¹ Նույն տեղում, էջ 216։

²² R. Neer, *Art and Archaeology of the Greek World*, Thames & Hudson, London, 2012, p. 280-281.

²³ Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ-Ս. Ղազար, 1910, էջ 97։

Այնուհետև հորենացին հիշատակում է Հռոմեական կայսրությունում տարբեր կուռքերի մեհյանների ավերումը Թեոդոսիոս Մեծ կայսեր կողմից՝ դրանց թվում նաև Արեգակինը. «Սա փակեաց զմեհեանս կոռցն մինչև յատակս... զանուանեալն Արեգական և Արամեայ և Ափրոդիտեայ ի Բիւզանդիոն»²⁴: Այսինքն՝ ակնհայտ է, որ քրիստոնյա կայսրն ավերել է Բյուզանդիոն քաղաքում գտնվող Հելիոսի մեհյանը: Անմիջապես տվյալ հատվածը շարունակելով՝ հորենացին նշում է նաև այլ քաղաքներում հեթանոսական մեհյանների ավերման մասին. «նոյնպէս և զտաճարն Իլիւ քաղաքի, զԻբաճոսի զմեծ և զհռչակաւոր զերեքքարեանն»²⁵: Միանշանակ խոսքը Լիբանանի Հելիոպոլիսի մասին է²⁶, սակայն անհասկանալի է, թե ինչու նախորդ օրինակների նման այն հայերեն չի թարգմանվել և արձանագրվել է հունարեն *Ἡλίου πόλις* ձևով, այսինքն՝ հոլովված ներկայացվել է տեղանվան առաջին բաղադրիչը, թարգմանվել է միայն երկրորդը, ինչն արդեն որոշակի շեղում է ընդունված սկզբունքից: Այլ ձեռագրերում քաղաքի անունը նշված է նաև «իլու» և «իլուզ» ձևերով²⁷, ինչը հունարեն *Ἡλιος* «արև, արեգ» բառի սեռական հոլովի աղավաղված ձևն է:

Մեկ այլ «Արեգակն» հորենացին նշում է Բ գրքի ԶԸ գլխում՝ նկարագրելով Բյուզանդիոն քաղաքում Սևերոս (Սեպտիմիոս Սևերոս) կայսեր կառուցած բաղնիքը. «և ինքն շինեաց զբաղանիսն ի տեղուջ սեանն, որ ունէր ստորագիր խորհրդական անուն Արեգակն, ըստ Թրակացոց բառի Զեւսիպոն, որոյ կոչմամբ յորշորջեցան և բաղանիքն»²⁸: Ըստ ամենայնի, այս դեպքում հորենացու նշած «Արեգակն» խորհրդավոր անունը կրկին առնչվել է Հելիոսի պաշտամունքին և վերածվել տեղանվան:

Վերոհիշյալ հիշատակություններից և ոչ մեկը հորենացու նշած օլիմպիական քաղաքին անմիջականորեն չի առնչվում:

Արեգը Աստվածաշնչի հայերեն թարգմանություններում

Հատկանշական է, որ Աստվածաշնչում ևս տվյալ հատկանվան հիշատակություններ կան, որոնց անդրադարձը դրսևորում է հայոց թարգմանական ավանդականությունը: Մասնավորապես, Հին Կտակարանի տարբեր գրքերում յոթ անգամ նշվում են միևնույն կերպ հունարենից Արեգ անվամբ թարգմանված քա-

²⁴ Նույն տեղում, էջ 297:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 360-361:

²⁷ Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց, Տփլիս, 1913, էջ 297, Մովսես Խորենացի (ՄՀ, հ. Բ, Ե դար), Անթիլիաս, 2003, էջ 2050:

²⁸ Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց, Տփլիս, 1913, էջ 238:

ղաքներ, և միայն մի դեպքում՝ Արեգ աղբյուրը²⁹ (**«Արեգի ջրերը»**), Հուդայի ցեղի սահմանների նկարագրության մեջ (Յէսու Ժե 7), ինչն արդեն եբրայերեն Շամաշի ('en šemeš) պարզ թարգմանությունն է (արևի աստվածություն՝ ասորեստանցիների և բաբելացիների դիցարանում): Մնացյալ բոլոր դեպքերում, որպես Արեգ քաղաք, նկատի է առնվել եգիպտոսի Հելիոպոլիսը, ընդամին, երեք դեպքում հիշատակվում է Հովսեփի Գեղեցիկի աներ՝ Արեգ քաղաքի քուրմը (Մննդոց ԽԱ 45, ԽԱ 50, ԽԶ 20), մի դեպքում նշվում է քաղաքի եբրայական Օն (եգիպտական Իունու) անվանումը, հայ թարգմանչի (գրչի) համապատասխան հավելմամբ. **«Եւ շինեցին քաղաքս ամուսնս փառաւոնի, զՓիղոն, եւ զՌամեսէ եւ զՈվն՝ որ է Արեգ քաղաք»** (Ելից Ա 11): Ըստ ամենայնի, խոսքը ոչ թե Հելիոպոլիսի կառուցման մասին է, այլ վերանորոգման, քանի որ այն ավերի վաղ էր հիմնվել (Վուլգատայում և եբրայերեն այլ տարբերակներում մյուս քաղաքների հետ Հելիոպոլիսը չի նշվում)³⁰:

Եսայու մարգարեության մեջ Հելիոպոլիսը հիշատակվում է եգիպտական հինգ քաղաքների թվում, սակայն լեզվական սխալի արդյունքում **«արևի քաղաք»** ('ir hašemeš) արձանագրվել է որպես **«կործանման քաղաք»** ('ir haheres): Այս շփոթ-բառախաղն առկա է նաև Երեմիայի և Եզեկիելի մարգարեություններում, եբրայերեն **«արևի տաճար»** կամ **«արևի աստծո տուն»** (bet' šemeš) արտահայտությունը գործածել է Երեմիա մարգարեն՝ կանխատեսելով Բաբելոնի նաբուգոդոնոսոր թագավորի նվաճման արդյունքում Հելիոպոլիսի սյուների (իմա՝ արձանների) կործանումն ու եգիպտական մեհյանների հրդեհումը. **«Եւ խորտակեսցէ զսինս Արեգ քաղաքի որ է յերկրիդ եգիպտացոց»** (Երեմիա ԽԳ 13): Երեմիայի ժամանակակից եզեկիելն իր մարգարեությամբ ևս հաստատել է վերոհիշյալը՝ բնագրում գործածելով քաղաքի եբրայերեն անվանումը. **«Երիտասարդք Արեգ քաղաքի եւ Բուբասայ անկցին սրով»** (Եզեկիել Լ 17): Որոշ եբրայերեն ձեռագրերում Օն տեղանվան փոխարեն գործածվել է «Ավեն» եբրայերեն բառը, արդյունքում այն ստացել է **«դաժան խելագարների տաճար»** իմաստը³¹: Ընդհանրապես, տեղանունների առումով եբրայական ձեռագրերում բառախաղերի դիմելու ավանդույթն ունեցել է նաև այլ դրսևորումներ, ընդամին, տարբեր են եղել պաղեստինյան և եգիպտական հրեաների մոտեցումները³²:

²⁹ Արեգի աղբյուրներ հայտնի են եղել նաև Հայկական լեռնաշխարհում, մասնավորապես, Մնձուր գետի ձախ կողմում, Գերսիմի տարածքում (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ա, կազմեցին՝ Ք. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Երևան, 1986, էջ 419):

³⁰ Հ. Խորեն Ս., «Ժամանակագրություն Ս. Գրոց, ըստ Շ. Հայկայ», Բազմավեպ, 11, 1919, էջ 331:

³¹ Еврейская энциклопедия Брокгауза и Ефрона, т. 12, СПб, 1912, стб. 97-98; Encyclopaedia Judaica, Second Edition, v. 8, Thomson Gale, 2007, p. 7.

³² Еврейская энциклопедия Брокгауза и Ефрона, т. 8, СПб, 1911, стб. 250-251.

Ավանդական «Արեգ»-ի փոխարեն եբրայական «Բեթ-շեմեշ»-ը «Բեթսամիա» ձևով Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանություններում արձանագրվել է դեռևս 1896 թ.-ից (Երեմիա ԽԳ 13): Կ. Պոլսում հրատարակված հայատառ թուրքերեն թարգմանության մեջ առկա է «Պեյր իշ շեմա» ձևը (Երեմիա Պապ ԽԳ 13)³³:

Միայն նախերի գրքում Արեգը երկու անգամ նշված է որպես Ադար եբրայական 12-րդ ամսանվան հայերեն համարժեք (Եսթեր Բ 16, Թ 15): Առժամանակ հայոց տոմարի Արեգ 8-րդ ամիսն ընդգրկել է հիմնականում մարտը, սակայն քանի որ տոմարը շարժական է եղել, տարբեր տարիների այդ համապատասխանությունը ևս պետք է փոխվեր: Ըստ է դարի աշխարհագրագետ և փիլիսոփա Անանիա Շիրակացու, ամսանունը ծագում է Հայկի դուստր Արեգի անունից³⁴, Արեգ էր կոչվում նաև հայոց տոմարի յուրաքանչյուր ամսվա առաջին օրը³⁵:

Եգիպտոսի և Լիբանանի համանուն քաղաքների հիշատակումներ գտնում ենք նաև այլ մատենագրական երկերում: Մասնավորապես, Բ-Գ դդ. Ալեքսանդրիայում ստեղծված և Ե. դ. հայերեն թարգմանված «Բարոյախառս» (Φυσιολόγος) բնագիտական ժողովածուում փյունիկ թռչունի առնչությամբ կրկին նշվում են Արեգ քաղաքը և Արեգ քաղաքի քուրմը. «Յետ է ամի դառնա ի ծառսն Լիբանանու, և լնի զԵրկոսին թևսն իւր խնկօք, և երթա ազդ առնէ քուրմն յԱրեգ քաղաքի յամսեանն փասնուտ կամ ի պարմոփի, այսինքն արեգ կամ ի քաղոց»³⁶: Գ-Դ դդ. պատմիչ Եվսեբիոսի «Քրոնիկոն»-ում ևս երկու անգամ նշվում է «յարեգ քաղաք»-ը³⁷:

Արեգ-Հելիոսի պաշտամունքը Մեծ Հայքում

Որքանո՞վ է Արեգ-Հելիոսի պաշտամունքը տարածված եղել Մեծ Հայքում, ինչն էլ կարող էր հիմք դառնալ օտար հատկանունների հայացման համար:

Ինքը Խորենացին նկարագրելով Արտաշես արքայի կողմից Հունաստանից որոշ հունական աստվածությունների արձանները բերելը և դրանց տեղակայելը

³³ Քիթապը Մուգատտէս (Աստուածաշունչ), Իսթանպոլ, 1892, էջ 776:

³⁴ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, աշխատութեամբ Ա. Աբրահամյանի, Երևան, 1940, էջ 76-77:

³⁵ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 256-257: Հին Կտակարանի այլ տեղերում միևնույն ամսանունն առկա է եբրայերեն ձևով, առանց որևէ թարգմանության: Եսթերի գրքի աշխարհաբար թարգմանություններում երբեմն որպես Արեգ է հանդես գալիս եբրայական Նիսան ամսանունը (Եսթեր Բ 9):

³⁶ H. Mapp, Сборник примч Вардана, ч. 3, Приложение, СПб, 1892, с. 145. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 123: Հայերեն և հունարեն տեքստերի համեմատությունը՝ Physiologus: the Greek and Armenian Versions with a Study of Translation Technique by G. Muradyan. Hebrew University Armenian Studies, Peeters, 2005, p. 103-104; 147:

³⁷ Եւսեբի Պամփիլեայ Կեսարացոյ ժամանակականք Երկմասնեայ, Մասն Ա, էջ 16, 24:

զանազան մեհյաններում՝ Արեգ-Հելիոսի անունը չի նշում: Այն չեն հիշատակում նաև Ագաթանգեղոսը և Փավստոս Բուզանդը: Հելիոսի պաշտամունքի մասին խոսք կարող է լինել միայն Խորենացու Բ գրքի Հէ գլխում³⁸:

Հարկ է նշել, որ Ագաթանգեղոսը հիշատակում է Վաղարշապատի արևելյան Արեգ դուռը, իմա՝ դարպասը (**«Ելանէր ընդ արևելս կոյս, ընդ Արեգ դուռն քաղաքին»**)³⁹, ինչը ևս կարող է կապակցվել Արեգ-Հելիոսի պաշտամունքին, քանի որ Ագաթանգեղոսն առանձին հաղորդում է նաև Միհրի մեհյանի մասին: Ընդհանրապես, Արեգ-Հելիոսին որոշակիորեն կարող է առնչվել նաև Հայկական լեռնաշխարհում մոտ չորս տասնյակ համանման տեղանունների և մանր տեղանունների առկայությունը, այդ թվում՝ բնակավայրերի, բերդերի, լեռների, գետակների ևն⁴⁰:

Ե դարի պատմիչ Եղիշեի երկերից մեկում Հելիոսը նշվում է հայերեն համարժեքով, կապված հունական առասպելաբանությունից հայտնի նրա դուստր Պասիփայեի և Մինոտավրոսի զրույցի հետ (**«Պասիփայ դուստրն Արեգականն»**)⁴¹: Խորենացին ևս հիշատակում է տվյալ զրույցը, սակայն առանց Հելիոսի կամ Արեգի անվան⁴²: **«Արեգական դուստր»** Պասիփայեի զրույցը հիշատակվում է նաև հետագա հայ միջնադարյան մատենագրության մեջ (Գրիգոր Մագիստրոս, Հովհաննես Երզնկացի, Եսայի Նչեցի, Առաքել Սյունեցի)⁴³:

Տարածված է այն կարծիքը, թե Հելիոսի գործառույթները հայկական դիցարանում պատկանում էին Արամազդի որդի Միհրին, որի անունը պարսկերեն ի թիվս այլ իմաստների՝ նաև «արև» (*Mihir*) իմաստն ուներ⁴⁴: Մյուս կողմից, Միհրը համադրվում է հունական Հեփեստոսի հետ, իսկ ավելի ուշ շրջանի հունական դիցարանում Հիպերիոնի որդի Հելիոսը նույնացվում էր Ապոլլոնի հետ:

Միհրական կամ միթրայական տաճարները զուտ հնդիրանական երևույթ չէին, պաշտամունքն Ա-Դ դդ. տարածված էր նաև Հռոմում և ենթակա արևմտյան նահանգներում, այն Ա դ. վերջին Արևելքից բերել էին հռոմեացի զինվորականները: Հռոմի և նախկին լատինախոս տարածքներում մինչ այժմ էլ հնագիտական պեղումների արդյունքում ի հայտ են գալիս միթրայական տաճարներ

³⁸ Մովսես Խորենացու Պատմություն Հայոց, Տփլիս, 1913, էջ 27:

³⁹ Ագաթանգեղայ պատմություն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան, 1983, էջ 112:

⁴⁰ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ա, Երևան, 1986, էջ 418-420:

⁴¹ Եղիշե (ՄՀ, հ. 2, Բ դար, Յալեուած), Անթիլիաս, 2007, էջ 1014: Եղիշեին այս փոփոխությունը, հավանաբար, սխալմամբ է վերագրված (Գ. Մուրադյան, Հին հունական առասպելների արձագանքները հայ միջնադարյան մատենագրության մեջ, Երևան, 2016, էջ 279):

⁴² Մովսես Խորենացու Պատմություն Հայոց, Տփլիս, 1913, էջ 162:

⁴³ Գ. Մուրադյան, Հին հունական առասպելների արձագանքները հայ միջնադարյան մատենագրության մեջ, էջ 137:

⁴⁴ Հ. Անադյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 331-332:

(*mithraeum*), մեծ մասը՝ շինությունների նկուղային հարկերում, քանի որ պաշտամունքն, այնուամենայնիվ, երկար ժամանակ գաղտնի էր: Գլխավոր աստվածությունը կոչվում էր *Deus Sol Invictus Mithras*, այն է՝ **«Միթրա աստված անհաղթ արև»**⁴⁵: Միհրի պաշտամունքը տարածված էր նաև Պոնտոսում, Վիրքում և Աղվանքում: Նման պայմաններում բնական է, որ Հայաստանը բացառություն չէր կազմում⁴⁶:

Կապված Դ դ. սկզբին Մեծ Հայքում քրիստոնեության հաստատման հետ՝ Բագահառիճ գյուղում Միհրի մեհյան է հիշատակում Ագաթանգեղոսը (**«Մեհական մեհեանն անուանեալ որդոյն Արամազդայ»**)⁴⁷: Միևնույն վայրում **«զՄիհրական մեհեանն որդիւն Արամազդայ»** ավելի ուշ հիշատակում է Ժ դ. պատմիչ Ուխտանես եպիսկոպոսը⁴⁸, փաստացի կրկնելով Ագաթանգեղոսի հաղորդումը: Հատկանշական է, որ Խորենացին նույն Բագահառիճում նշում է Հեփեսոսի արձանի տեղակայումը (**«զեփեսաուն ի Բագայառին»**)⁴⁹, այս կերպ փաստելով աստվածությունների գործառույթային նույնականությունը: Ավելի ուշ ժամանակահատվածի մեկնաբանությամբ նույնացվում էին նույնիսկ Արեգակն ու Վահագնը, իսկ Հեփեսոսը խորհրդանշում էր հուրը⁵⁰:

Ենթադրվում է, որ Գառնիի տաճարը նվիրված է Միհրին կամ Հելիոսին: Ընդամին, պատահական չէ, որ Գառնիի հունարեն Ք. հ. 77 թ. արձանագրության մեջ Մեծ Հայքի Տրդատ Ա թագավորը (մոտ 28-88 թթ.) ներկայանում է **«Արեգ Տրդատ»** կամ **«Հելիոս Տրդատ»** (ΗΑΙΟΣ ΤΙΡΙΔΑΤΗΣ) պատվանունով (ինչը բացակայում է Ապարանի հունարեն արձանագրության մեջ)⁵¹:

Ամեն դեպքում ակնհայտ է, որ Հելիոս-Միհր փոխկապակցվածության պայմաններում էլ նկատի էր առնվում Արեգի պաշտամունքը: Սակայն Հելիոսի առանձնակի անվանական պաշտամունք, ըստ երևույթին, Մեծ Հայքում չի եղել,

⁴⁵ M. Clauss, *The Roman Cult of Mithras: The God and His Mysteries*. Routledge, New York, 2001, p. 7-9; P. Nabarz, *The Mysteries of Mithras: The Pagan Belief That Shaped the Christian World*. Rochester, Vermont, 2005, p. 25-26.

⁴⁶ Թեմային առանձնակի անդրադարձել է Ա. Պետրոսյանը (Ա. Պետրոսյան, *Հայկական էպոսի հնագույն ակունքները-2*, Երևան, 2020, էջ 170-189):

⁴⁷ Ագաթանգեղոս, *Հայոց պատմություն*, էջ 444:

⁴⁸ Ուխտանես եպիսկոպոս (ՄՀ, հ. ԺԵ, Ժ դար, գ. Բ), Անթիլիաս, 2010, էջ 501:

⁴⁹ Մովսիս Խորենացույ Պատմություն Հայոց, Տիգրիս, 1913, էջ 127:

⁵⁰ Գ. Մուրադյան, *Հին հունական առասպելների արձագանքները հայ միջնադարյան մատենագրության մեջ*, էջ 255, 267:

⁵¹ Ս. Կրկյաշարյան, *Հայոց արքայի տիտղոսաշարի մասին*, ԼՀԳ, 9, 1982, էջ 49-50: Ավելի վաղ Հ. Մանանդյանը կարծիք է հայտնել, թե ΗΑΙΟΣ Տրդատի հոմոնիմական Aelius մականունը կարող է լինել (Հ. Մանանդյան, *Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը*, Երևան, 1946, էջ 5-6), ինչը նվազ հավանական է: Թեմայով առավել մանրամասն Դ. Мурадян, *Греческая надпись Трдата I, найденная в Гарни. ИФЖ*, 3, 1981, с. 81-94:

նույնիսկ մատենագրության մեջ Հելիոսի որևէ հանվանե հիշատակություն հայտնի չէ: Ըստ այդմ, Խորենացուց հետո սպասելի չէ դրա մասին բավարար տեղեկացվածություն:

Արեգը Խորենացու երկի թարգմանություններում

Առկա տեղեկատվությունը բերել է համոզման, որ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկում բազմիցս գործածված «Արեգ»-ը նաև եվրոպական տարբեր լեզուներով թարգմանվելու ընթացքում է հանիրավի ներկայացվել որպես հունարեն «Հելիոպոլիս» համապատասխան անուն:

1736 թ. Լոնդոնում Ուիսթոն եղբայրների հրատարակած լատիներեն թարգմանությամբ քաղաքը նշված է միևնույն հայկական ձևով՝ **apud Jaregum, urbem Helladis**⁵²: Ռուսերեն առաջին իսկ՝ 1809 թ. Սանկտ-Պետերբուրգի հրատարակության մեջ (Իոսիֆ Իոաննեսովի, նույն ինքը՝ Հովսեփ Հովհաննիսյանի թարգմանությամբ) քաղաքի անունը ևս անփոփոխ նշված է հայկական ձևով՝ «**В Ареге, Елландском городе**»⁵³: Միևնույն սկզբունքին 1841 թ. հետևել են իտալացի թարգմանիչները՝ **città di Arego degli Elladi**⁵⁴: Ակնհայտ է, որ թարգմանիչները խուսափել են որևէ հունական համարժեքի հետ նույնացումից, ըստ ամենայնի, գիտակցելով Հելիոպոլիս անվամբ որևէ հայտնի քաղաքի հետ հայերեն տեղանվան առնչություն չունենալը:

Այլ է պարագան 1841 թ. Վենետիկի Ս. Ղազարի Մխիթարյան միաբանության շաղկույթյամբ եվրոպական լեզուներով իրականացված թարգմանություններում: Այսպես, Մխիթարյանների հրատարակած իտալերեն տարբերակում արդեն առկա է անհարկի նույնացումը Հելիոպոլիսի հետ՝ **Eliopoli, città dell' Ellade**⁵⁵: Ծանոթագրության մեջ քաղաքի անունը տրվում է թարգմանաբար՝ **città del sole**, նշվում, որ թեև Հունաստանում նման անվամբ քաղաք չկա, այնուամենայնիվ, հին ժամանակներում այդպիսիք գոյություն են ունեցել⁵⁶: Վերոհիշյալն արձանագրվել է նաև 1850 թ. վերահրատարակության մեջ⁵⁷: Միևնույն մոտեցումը կրկնվում է նաև ֆրանսերեն թարգմանության մեջ՝ **Héliopolis, ville de l'Hellade**⁵⁸:

⁵² **Mosis Chorenensis** *Historiae Armeniacae*. Libri III, Londini, 1736, p. 279.

⁵³ *Арменская история сочиненная Моисеем Хоренским*, перевел с Арменскаго на Россійскій языкъ **Архидиакон Иосиф Иоаннесов**, СПб, 1809, с. 92.

⁵⁴ **Mosè Corenese**, *Storico Armeno del quinto secolo*. Versione di **Giuseppe Cappalletti**. Venezia, 1841, p. 250.

⁵⁵ *Storia di Mosè Corenese*. Venezia, 1841, p. 332.

⁵⁶ Նույն տեղում, էջ 332-333:

⁵⁷ *Storia di Mosè Corenese*. Venezia, 1850, p. 332-333.

⁵⁸ **Moïse de Khorène**, *Histoire d'Arménie*. Venise, 1841, p. 97.

1845 թ. Փարիզի ֆրանսերեն վերահրատարակության մեջ սխալը բառացիորեն կրկնվում է⁵⁹, իսկ հատուկ անունների հավելվածում նշվում է, թե Հելիոպոլիս անվամբ քաղաքներ եղել են եգիպտոսում, Լիբանանում և Թրակիայում, ընդամին, «Թրակիական Հելիոպոլիսը» նույնացվում է Խորենացու նշած «Արեգի» հետ⁶⁰։ Սա Խորենացու հաղորդման արհեստական համաձայնեցման, թերևս, հայտնի միակ փորձն է։

1858 թ. Մկրտիչ էմինի ռուսերեն թարգմանության մեջ նշվում է «Հելիոսի քաղաք» մեկ այլ ձևը՝ «в городе Гелиоса в Елладе»⁶¹, ինչի առնչությամբ տրվում է հետևյալ բացատրությունը. «солнце-город – Гелиополис»⁶²։ Միևնույնը կրկնվել է 1893 թ. «նոր թարգմանության» մեջ՝ «в Гелиополе, что в Елладе»⁶³, տրվել է միևնույն բացատրությունը⁶⁴։

1869 թ. գերմաներեն թարգմանության մեջ քաղաքը նմանապես նույն կերպ է ներկայացվել՝ **Heliopolis in Griechenland**⁶⁵։ Ի տարբերություն վերոհիշյալի՝ 1869 թ. Փարիզում հրատարակված և Վիկտոր Լանգլուայի կազմած հայ պատմիչների ժողովածուի մեջ արդեն նկատելի է որոշակի զգուշավոր մոտեցում՝ **Héliopolis (Arek-khaghakh), ville de la Hellade**⁶⁶։ Ավելին, նշանավոր հայագետն իրավամբ նշել է հետևյալ վերապահումը. «Այս անվանումը, հավանաբար, փոփոխվել է ընդօրինակողների կողմից»⁶⁷։

1889 թ. Խորեն Ստեփանեի աշխարհաբար թարգմանության մեջ «**Ելլադայի Արեգ ֆաղաֆի**» համար ծանուցվում է. «**արեգակի ֆաղաֆ, արևմտեան մատենագիրների Հելիոպոլիս**»⁶⁸։ Միևնույնը կրկնվել է նաև աշխարհաբար հետագա հրատարակություններում⁶⁹։

⁵⁹ Moïse de Khorène, *Histoire d'Arménie*. Paris, 1845, p. 97.

⁶⁰ Նույն տեղում, էջ 96։

⁶¹ *История Армении Моисея Хоренского, перевел с армянского и объяснил Н. Эмин*, Москва, 1858, с. 196.

⁶² Նույն տեղում, էջ 318։

⁶³ *История Армении Моисея Хоренского. Новый перевод Н. О. Эмина*, Москва, 1893, с. 177.

⁶⁴ Նույն տեղում, էջ 274։

⁶⁵ *Des Moses von Chorene Geschichte Gross-Armeniens*. Regensburg, 1869, S. 198.

⁶⁶ *Collection des historiens anciens et modernes de l'Arménie. T. II. Première période: Gorioun, Moïse de Khorène, Élisée Vartabed, Lazare de Pharbe, Ezniq de Gogh. Par Victor Langlois*. Paris, 1869, p. 154.

⁶⁷ Նույն տեղում։

⁶⁸ **Մովսէս Խորենացու** Հայկական պատմութիւն, աշխարհաբար թարգմանեց եւ լուսարանեց Խ. Տ. Վ. Ստեփանէ, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 248։

⁶⁹ **Մովսէս Խորենացու** Հայկական պատմութիւն, աշխարհաբար թարգմանեց եւ լուսարանեց Խ. Կախիկոպոս Ստեփանէ, Ս.-Պետերբուրգ, 1897, էջ 476։

1913 թ. Թիֆլիսում Ստեփան Մալխասյանցի խմբագրությամբ և Մանուկ Աբեղյանի ու Սեթ Հարությունյանի աշխատությամբ «Պատմութիւն Հայոց» քննական հրատարակության մեջ, ընդհանրապես, անդրադարձ որևէ տեղանվան չի եղել: Սակայն արդեն 1940 թ. աշխարհաբար հրատարակության մեջ Մալխասյանցը նշել է տվյալ տեղանվան նույնականացման առնչությամբ իր վերապահումները. «Իսկ Արեգ ֆաղափի մասին ոչինչ չենք կարող ասել: Մեզ հայաճի երկու Հելիոպոլիսներից, այսինքն Արեգակի ֆաղափների, ոչ մեկը չի կարող լինել, իսկ բուն Հունաստանում այս անունով ֆաղափ մեզ հայաճի չէ»⁷⁰: Հետագա բոլոր վերահրատարակություններում վերոհիշյալն անփոփոխ կերպով արձանագրվել է⁷¹:

1978 թ. Ռոբերտ Թոմսոնի անգլերեն թարգմանության մեջ ծանոթագրությամբ նմանապես նշվում է վերոհիշյալը՝ հիմք ընդունելով Գ-Դ դդ. պատմիչ Եվսեբիոսի «Քրոնիկոն»-ում առկա օլիմպիական ցուցակը, սակայն անգլերեն բուն տեքստում տեղանունն արձանագրվել է նախորդ եվրոպական լեզուներով հրատարակությունների նման («at Heliopolis in Hellas»)⁷²: Թոմսոնը, որպես հնարավոր շփոթի պատճառ է նկատում 30-րդ օլիմպիական խաղերի մասով պիսացիների հետ «հելիոպոլիսների» (Heliats'ik') հիշատակությունը⁷³, ինչին կանդրադառնանք ստորև:

1990 թ. ակադ. Գագիկ Սարգսյանի իրականացրած ռուսերեն թարգմանության մեջ խնդրո առարկա հատվածը ներկայացվել է բառացի կերպով՝ «В городе Солнца, в Элладе»⁷⁴: Ծանոթագրության մեջ, ըստ ամենայնի, հիմք ընդունելով նաև Մալխասյանցի ավելի վաղ հայտնած տեսակետը՝ Սարգսյանը նմանապես վերապահ է մնացել նախկին նույնացումներից («Դժվար է ասել, թե ուր ֆաղափի մասին է խոսքը»)⁷⁵: Ինչ վերաբերում է Բյուզանդիոնում Արեգական մեհյանին, ապա այն թարգմանվել է բառացի՝ «храм Солнца», իսկ դրան անմիջապես հաջորդող «զտաճառն Իլիու ֆաղափի» հատվածն իրավամբ վերածվել

⁷⁰ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, քաղզմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940, էջ 325:

⁷¹ Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 362 ևն:

⁷² Moses Khorenats'i, *History of the Armenians. Translation and Commentary on the Literary Sources* by Robert W. Thomson. Harvard University Press Cambridge, Massachusetts, London, 1978, p. 301. Միևնույնը կրկնվում է 2006 թ. վերահրատարակության մեջ (Moses Khorenats'i, *History of the Armenians. Translation and Commentary on the Literary Sources* by Robert W. Thomson. Caravan Books Ann Arbor, Michigan, 2006, p. 296-297):

⁷³ Նույն տեղում:

⁷⁴ Мовсес Хоренаци, *История Армении*. Перевод с древнеармянского языка, введение и примечания Г. Х. Саркисяна, Ереван, 1990, с. 181.

⁷⁵ Նույն տեղում, էջ 259:

է «Հելիոսի քաղաքի տաճարի» («храм города Гелиоса»)⁷⁶, թեև ակնհայտ է, որ երկու դեպքում էլ խոսքը Հելիոսի մասին է:

1993 թ. Լանգլուայի թարգմանություն հիման վրա Աննի և Ժան-Պիեռ Մահենների լրամշակված ֆրանսերեն տարբերակի համապատասխան հատվածում քաղաքի անվանումը կրկին նշվում է եվրոպական հրատարակություններում ընդունված ձևով՝ *Héliopolis d'Hellade*⁷⁷, սակայն ծանոթագրության մեջ շեշտվում է քաղաքի նույնականացված չլինելու հանգամանքը և Թոմսոնի ենթադրություն հիման վրա կասկած հայտնվում, թե արդյո՞ք Խորենացին այն շփոթել է էլիֆայի (էլիսի) հետ⁷⁸: Միևնույնը կրկնվում է նաև 2012 թ. վերահրատարակության մեջ⁷⁹:

2003 թ. Բագրատ Ուլուբաբյանի իրականացրած և լրամշակված աշխարհաբար թարգմանության մեջ կրկնվել է Խորեն Ստեփանեի տարբերակը («**Նլադայի Արեգ ֆաղաֆ**»)⁸⁰, ծանոթագրություններում որևէ նշում տեղանվան մասին չկա:

Հարկ է նշել, որ ակադ. Հրաչյա Աճառյանն «Արեգական ֆաղաֆ» առնչություն մը նշում է միայն Աստվածաշնչի համապատասխան հատվածներում հանդիպող օրինակները⁸¹, սակայն Խորենացու հիշատակությանը որևէ անդրադարձ չունի: Վերոհիշյալը չէր կարող վրիպում լինել, ըստ ամենայնի, անվանի գիտնականը հիմք է ընդունել Լանգլուայի և Մալխասյանցի վերապահումները:

Ըստ այդմ, Արեգ քաղաքի պարզաբանման հարցը մինչ այժմ բաց է մնացել:

Էլիս (Ἑλις), բայց ոչ Հելիոս (Ἥλιος)

Օլիմպիական խաղերը Հին Հունաստանում անցկացվել են Ք. ա. 776 թ.-ից, Պելոպոնեսոսի Օլիմպիա քաղաք-սրբավայրում, յուրաքանչյուր չորս տարին մեկ: Մինչև Ք. հ. 394 թ. Թեոդոսիոս Ա Մեծ կայսեր օրոք անցկացվել են վերջին փաստագրված օլիմպիական խաղերը: Խորենացու հիշատակած Արեգ քաղաքի

⁷⁶ Նույն տեղում, էջ 172: Գ. Սարգսյանի ծանուցմամբ՝ «Гелиоград (Гелиополь - Город Солнца)», էջ 258:

⁷⁷ *Moïse de Khorène, Histoire de l'Arménie. Nouvelle traduction de l'arménien Classique par Annie et Jean-Pierre Mahé (d'après V. Langlois) avec une introduction et des notes.* Gallimard, Paris, 1993, p. 285.

⁷⁸ Նույն տեղում, էջ 401:

⁷⁹ *Moïse de Khorène, Histoire de l'Arménie. Nouvelle traduction de l'arménien Classique par Annie et Jean-Pierre Mahé (d'après V. Langlois) avec une introduction et des notes.* Gallimard, Paris, 2012, p. 285; 401.

⁸⁰ **Մովսես Խորենացի**, Պատմություն հայոց, թարգմ. արևելահայերեն և ծանոթ. Բ. Ուլուբաբյանի, Երևան, 2003, էջ 261:

⁸¹ **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 310:

խնդրի բացահայտման և պարզաբանման հարցում, նախ և առաջ, անհրաժեշտ է քննել օլիմպիական խաղերի անցկացման բուն աշխարհագրական միջավայրը:

Նախ, Օլիմպիան մաս էր կազմում Պելոպոնեսոսի հյուսիսարևմտյան շրջանին, որն առավել հայտնի է եղել էլիս անվամբ (հին հուն. *Ἥλις, Ηλεία*, նոր հուն. *Ἠλίδα*, լատ. *Elis*): Այն սահմանակից էր Աքայային, Արկադիային և Մեսսենիային, իսկ արևմուտքից՝ Հոնիական (Իոնական) ծովին: Սկզբում էլիսի շրջանի կենտրոնն էր օլիմպիական քաղաք Պիսան, այնուհետև՝ համանուն էլիս քաղաք-պետությունը, որը հիմնվել է Ք. ա. 471 թ.:

Ἥλις անվան ծագումնաբանությունը կապվում է նախահունարենի **wālis* «հովիտ», «ցածրադիր վայր» բառին, ինչին աղերսվում է լատ. *vallis* (հմտ. անգլ. *valley*), դորիական բարբառով *Ἄλις*, Օլիմպիայի հնագույն դրամներին՝ *FAΛΕΙΩΝ*⁸²: Ըստ այդմ, հայերեն «արեգ»-ի հետ իմաստային որևէ աղերս չի կարող դիտարկվել: Նմանապես բացառվում է որևէ առնչություն Հելիոսին, քանի որ Օլիմպիան Զևսի պաշտամունքային կենտրոնն էր:

Հենց էլիսից էին հայտարարվում օլիմպիական խաղերի ժամկետները: Էլիսից կամ Էլիսից էր սերում Ք. ա. 776 թ. անցկացված 1-ին օլիմպիական խաղերի առաջին չեմպիոն Կորեբոսը (հուն.՝ *Κόροιβος ο Ηλείος*, լատ. *Coroebus Eleus* կամ *Heliensis*), որը երկու անգամ հիշատակվում է Եվսեբիոսի «Քրոնիկոն»-ում, որպես «**Կուտիբոս Հեղիացի**»⁸³: 30-րդ օլիմպիական խաղերի առնչությամբ առկա է Եվսեբիոսի հետևյալ հաղորդումն էլիսցիների և պիսացիների փոխհարաբերությունների մասին. «**Պիսացիք ապստամբեցին ի հեղիացոցն**» (լատ.՝ **Pisaei ab Heliensibus defecerunt**, հուն.՝ **Πισαῖοι Ηλείων ἀποστάντες**⁸⁴: Ընդհանրապես, տեղացի էլիսցիները զգալի թիվ էին կազմում մասնակիցների և հաղթողների թվում, ինչի մասին են վկայում Եվսեբիոսի երկու պահպանված օլիմպիական ցուցակները: Հերոդոտոսի հաղորդմամբ, եգիպտացի իմաստունները նույնիսկ հորդորել են իրենց այցելած էլիսցիներին (Ս. Կրկշառարյանի թարգմանությամբ՝ էլեյացիներին)⁸⁵ արգելել օլիմպիական խաղերին տեղացիների մասնակցությունը և մրցություններին թույլ տալ միայն օտարերկրացիներին:

⁸² W. Smith, *Dictionary of Greek and Roman Geography*. Vol. 1, London, 1854, p. 816. Հմտ. A. Γαζής, *Λεξικόν ελληνικόν διηρημένον εις τόμους τρεις. Τόμος 1. Εν Βενετία*, 1809, σ. 1879-1880; *Древнегреческо-русский словарь. Том I. Составил И. Х. Дворецкий*, Москва, ГИС, 1958, с. 750.

⁸³ Եւսեբի Պամփիլեայ Կեսարացոյ Ժամանակականք երկմասնեայ, Մասն Ա, էջ 133, Մասն Բ, էջ 98-99:

⁸⁴ Նույն տեղում, Մասն Ա, էջ 135:

⁸⁵ Նույն տեղում, Մասն Ա, էջ 135:

⁸⁵ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, էջ 150-151, 481: Այլ աղբյուրով տեղաբնակների ամվանումը տրվում է «էլեացիներ», «էլիսացիներ» կամ «էլիսցիներ» ձևով (նույն տեղում, էջ 231, 270, 535):

րին (իմա՝ այլ հելլեններին), «ավելի արդարացի կարգ ու կանոնի» հաստատման նպատակով⁸⁶:

Ընդհանուր առմամբ, էլիսը հայտնի էր հունական աշխարհում և գործող մասնակցում էր տարբեր պատերազմների ու արշավանքների: Իլիոն (Տրոյա) արշավող աքայացիներին օգնության հասած էլիսցիների երկիրն է *Ήλιδα* (հայ-ցական հոլովի) և *Ήλιδος* (սեռական հոլովի) ձևով հիշատակում Հոմերոսն իր «Իլիականի» մեջ (Հոմ. Իլ. Բ 615 և 626)⁸⁷: Հունական այս երկրամասին և նրա բնակիչներին տարբեր առիթներով անդրադարձել են Հին աշխարհի բազմաթիվ պատմագիրներ ևս (Ստրաբոն, Թուկիդիդես, Պալսանիաս, Պոլիբիոս, Պլինիոս Ավագ ևն): Էլիսը հայտնի է եղել նաև իր փրկիսոփայական դպրոցով, այնտեղից են սերել հունական աշխարհի մի քանի նշանավոր փրկիսոփաներ: Ներկայումս քաղաքն առավելապես հայտնի է Իլիա (*Ηλεία*) անվամբ, ինչը ևս հնում գործածական է եղել նրա առնչությամբ⁸⁸:

Հիմնվելով Լիբանանի Հելիոպոլսի առնչությամբ խորենացու ձեռագրերում «Իլիու ֆալաֆ»⁸⁹ ձևի առկայության վրա՝ ենթադրելի է, որ հավելում հանդիսացող «Արեգի» փոխարեն մինչ այդ գործածվել է «Իլիս» ձևը, ինչը ևս հարազատությանմբ էր փոխանցում հունական բնագրային տարբերակը: Բնականաբար, չի բացառվում, որ ավելի վաղ սկզբնագիր տեքստում կարող էին գործածվել «ելիս», «ելիս» և այլ նմանօրինակ ձևերը:

Նույն կերպ խորենացու «Պատմութեան» բազմաթիվ ձեռագրերում Իլիոնի անվան հետ կապված առկա են տարբեր գրության ձևեր՝ «եղիական», «ելիական», բայց նաև «իլիական» և «իդիական»⁹⁰: «Աշխարհացոյց»-ում տեղանունը

⁸⁶ Նույն տեղում, էջ 151:

⁸⁷ «Իլիական»-ի հայերեն թարգմանություններում տեղանունը տարբեր ձևերով է ներկայացվել, մասնավորապես, 1843 թ. Վենետիկի հրատարակության մեջ՝ «եղիտե» և «եղիդոս» (*Համերոսի եղիական*, Բ. Ա., թարգմանեց ի Հելլենական է. Ե. Վ. Քոմանճան, Վենետիկ, Ս. Ղազար, 1843, էջ 100-101), 1864 թ. Ա. Բագրատունու թարգմանությամբ Վենետիկի մեկ այլ հրատարակության մեջ՝ «ելիսայ» (*Համերի Իլիական*, հան ի Հայ Բագրատունի, Վենետիկ, Ս. Ղազար, 1864, էջ 36), 1911 թ. Ա. Ղազիկյանի թարգմանության մեջ՝ «ելիսա» և «ելիտոս» (*Համերի Իլիական*, թարգմ. Ա. Ղազիկյան, Վենետիկ, Ս. Ղազար, 1911, էջ 67-68), 1955 թ. Երևանի հրատարակության մեջ՝ «Հելիդ» (*Համերոս, Իլիական*, հին հուն. բնագրից թարգմ. Հ. Համբարձումյան, Երևան, 1955, էջ 68), 1987 թ. մեկ այլ հրատարակության մեջ՝ «ելիսա» և «ելիտոս» (*Համերոս, Իլիական*, գրաբարից թարգմ.՝ Մ. Խերանյան, Երևան, 1987, էջ 64): Ճշգրիտ թարգմանությունը («ելիս») տե՛ս Համերոս, *Իլիական*, հին հուն. թարգմանությունը, ատաճաբանը և ծանոթագրություններ՝ Գ. Մուրադյանի և Ա. Թուփչյանի, Երևան, 2024, էջ 84:

⁸⁸ Μ. Σταματελάτος, Βάμβα-Σταματελάτου Φ., Γεωγραφικό Λεξικό της Ελλάδας. Τόμος Α'. Αθήνα, 2012, σ. 248.

⁸⁹ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 297:

⁹⁰ Նույն տեղում, էջ 4, 87-88:

նշված է «Իլիոն» ձևով⁹¹, եղիշեն «ելիական պատերազմի» մասին խոսելով նմանապես հիշատակում է «Իլիոն» տեղանունը⁹²: Ավելի ուշ, Ժ դ. պատմիչ Թովմա Արծրունու և Անանուն Շարունակողի «Պատմութիւն Տանն Արծրունեաց» երկում նշվում է «Ելիոն»-ը⁹³: Մովսես Կաղանկատվացու երկում միևնույն տեղանունը նշվում է երկու ձևով՝ «Իլիոն» և «Իդիոն»⁹⁴: Հետագա ժամանակահատվածի մատենագիրների երկերում հանդիպում են ոչ միայն նշված ձևերը, այլև աղավաղված «Լիոն», «Իլոն», «Եդիոն» և «Ղիոն»⁹⁵:

Ուշագրավ է, որ Հին Հունաստանի էլիս պատմական երկրամասը հիշատակել է Զ դդ. հունաբան դպրոցի գործիչներից փիլիսոփա Դավիթ Անհաղթն իր «Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտէլի» երկում: Մասնավորապես, խոսելով Ք. ա. Դ դ. հույն փիլիսոփա, Սոկրատեսի կրտսեր աշակերտ և էլիզաբրեթրիական փիլիսոփայական դպրոցի հիմնադիր Ֆեդոնի (հուն.՝ Φαίδων ὁ Ἠλεῖος) մասին՝ Դավիթ Անհաղթը հստակ նշում է նրա ծագումը՝ «ելիական»⁹⁶ վասն Փեդոնի որ էր յելիդեայ⁹⁷:

Ավելի ուշ «Աշխարհացոյց»-ում միևնույն երկրամասը Հելլագա բնաշխարհի 30 գավառների թվում նշվում է «գիլիա» ձևով⁹⁸, ինչը կրկին հունական տարբերակի արտացոլումն է: Այսինքն, ըստ էության, երկրամասը հայ մատենագրության մեջ որոշակիորեն ծանոթ էր իրական հունական անվամբ և «Արեգի» հետ չէր կապակցվում:

Ամեն դեպքում ակնհայտ է, որ շփոթվել են գրեթե համահունչ Ἠλιος (Հելիոս) «Արեգ» բառը և Ἠλεις կամ Ἠλεία տեղանունը, ինչի արդյունքում տեղանունը սխալ մեկնաբանությամբ է ընկալվել և արձանագրվել ձեռագրերում:

Կարո՞ղ էր արդյոք Խորենացին ինքը սխալվել տեղանվան հարցում: Դժվար պատկերացնելի է, որ հիմնարար հունական ուսում առած պատմագիրը, որն ուսումնասիրության ընթացքում ծանոթացել էր Հերոդոտոսի և անտիկ շրջանի այլ

⁹¹ Աշխարհացոյց (ՄՀ, հ. Բ, Ե դար), Անթիլիաս, 2003, էջ 2147:

⁹² Եղիշէ (ՄՀ, հ. Զ, Բ դար, Յաւելում), Անթիլիաս, 2007, էջ 1014:

⁹³ Թովմա Արծրունի և Անանուն (ՄՀ, հ. ԺԱ, Ժ դար, Ա գիրք), Անթիլիաս, 2010, էջ 78:

⁹⁴ Մովսէս Կաղանկատուացի (ՄՀ, հ. ԺԵ, Ժ դար, Բ գիրք), Անթիլիաս, 2010, էջ 35, 642, 653:

⁹⁵ Գ. Մուրադյան, Հին հունական առասպելների արձագանքները հայ միջնադարյան մատենագրության մեջ, էջ 119, 164, 237, 276:

⁹⁶ Տվյալ դեպքում «ելիականը» միևնույն «իլիականն» է (οἱ Ἠλειακοί), հուն. Ἠλειακός բառացի՝ «իլիսից», «իլիսացի» կամ «իլիսի դպրոցի փիլիսոփա», ինչը դյուրութամբ շփոթվել է այլ բառերի հետ (հուն. ἡλιακός «արևի», «արևային»):

⁹⁷ Դավիթ Անյաղթ (ՄՀ, հ. Գ, Զ դար, Բ գիրք), Անթիլիաս, 2004, էջ 287: Հմմտ. Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի: Ընծայեալ էլիսսի իմաստասիրի: Ի լոյս էած Յ. Մանանդեան, Ս.-Պետերբուրգ, 1911, էջ 3, 164, Դավիթ Անյաղթ, երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Արեշտադանի, Երևան, 1980, էջ 197:

⁹⁸ Աշխարհացոյց (ՄՀ, հ. Բ, Ե դար), Անթիլիաս, 2003, էջ 2144: Հմմտ. Անանիա Շիրակացի, Մատենագրութուն, էջ 274:

հեղինակների երկերին, նման շփոթ թույլ տար: Իմաստային նշանակությամբ և գրությամբ տարբեր «էլիսը» «Հելիոսի» կամ «Իլիոսի» հետ կարող էին շփոթել միայն հունարենին բավարար չտիրապետող և հունական աշխարհի լեզվական ու աշխարհագրական իրողություններից հեռու ընդօրինակողները⁹⁹:

Մալխասյանցն իր երկարատև ուսումնասիրությունների արդյունքում եզրակացրել է, որ մեզ հասած «Պատմութիւն»-ը խմբագրված է հորենացու գրած սկզբնագրից, որն, անշուշտ, կորսված է¹⁰⁰: Ականավոր գիտնականը բազմաթիվ ձեռագրերի և փաստերի բաղդատությամբ ապացուցել է վերոհիշյալը, ի վերջո, համոզմունք հայտնել, որ «սկզբնագիրը ենթարկվել է խմբագրությունների, և այն ոչ մի անգամ, կրել է բազմառեսակ փոփոխություններ թե՛ բովանդակության կողմից – կրճատումներ, ընդմիջարկություններ, ուղղումներ – և թե՛ լեզվի»¹⁰¹:

Մալխասյանցն անձամբ բավական մոտ է եղել «Արեգ»-ի խնդրի պարզաբանմանը, ընդամին, ծանոթագրություններում նշել է, որ Պիսան գտնվել է «Հունաստանի էլիոս {էլիդա} նահանգում»¹⁰²: Ըստ ամենայնի, որոշ խանգարիչ հանգամանք է եղել տեղանվան գործածումը որևէ այլ երրորդ աղբյուրից: Մյուս կողմից, ակնհայտ է, որ հունական պատմական երկրամասն ամբողջությամբ կլանել է ժամանակին օլիմպիական խաղերով հայտնի համանուն քաղաքի մասին հիշողությունը:

Հունարեն որոշ բառերի և հատկանունների աղավաղված ձևերով առկայությունը հորենացու ձեռագրերում փաստում են հետագա ընդօրինակողների կամ խմբագրողների պատրաստվածության աստիճանը: Մեզ հասած հորենացու որոշ ձեռագրերում նույնիսկ Պիսային վերաբերվող «ի Պիսաս» հատվածն աղավաղվել է և վերածվել «ի պիսաս» կամ «ի պիսակս» միանգամայն անհասկանալի ձևերի, ինչը տեղ է գտել նաև 1695 թ. Թովմաս Վանանդեցու առաջին տպագիր հրատարակության մեջ¹⁰³:

Միանշանակ, նշված բոլոր աղավաղումները և աղճատումները հետագա ընդօրինակողների ու խմբագրողների կողմից են իրականացվել, վստահաբար ե գարից հետո: Օլիմպիական խաղերը քրիստոնյա կայսրության կողմից այլևս

⁹⁹ Արդեն իսկ ե դ. վերջին տիրապետող էր Տիգրանի արմունիքի կողմից բացահայտ բաշարվող և հունաբան դպրոցին հակամարտ հոսանք, որոնց ներկայացուցիչներին Ղազար Փարպեցին անվանում է «արեղեանդ Հայոց» (Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, էջ 436):

¹⁰⁰ Ստ. Մալխասյանց, Մովսես հորենացու առեղծվածի շուրջը, Երևան, 1940, էջ 116:

¹⁰¹ Նույն տեղում, էջ 129:

¹⁰² Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, Երևան, 1968, էջ 362:

¹⁰³ Ազգաբնակչության տոհմին Յաբեթեան յօրինեցեալ ի Մովսիսէ հորենացու, Վենետիկ, 1695, էջ 380:

չէին հովանավորվում և, ըստ էության, դադարեցվել էին Դ դարի վերջին, սակայն հակառակ տարածված կարծիքի՝ դրանք փաստացի շարունակվել են նաև հետագայում, մինչև Թեոդոսիոս Բ կայսեր գահակալման ժամանակահատվածը (402-450 թթ.), երբ ավերվել էին բոլոր հեթանոսական տաճարները: Հայտնի է, որ 426 թ. Օլիմպիայում Զևսի տաճարի հրդեհումից հետո դրանք վերջնականապես դադարեցվել են: Ըստ այդմ, մոռացություն են մատնվել ոչ միայն Պիսա և էլիս քաղաքները, այլև ողջ մարզը:

Ամեն դեպքում ակնհայտ է, որ Խորենացու տեքստի աղճատումը և հայերեն «Արեգ» անվամբ էլիսի կամ Իլիսի արձանագրումն իրականացվել է այն ժամանակ, երբ օլիմպիական խաղերն արդեն վաղուց դադարեցվել էին և անգամ բավարար պատկերացում չկար դրանց մասին: Հակառակ պարագային, որևէ ընդօրինակող կամ խմբագրող հստակ տեղեկացված կլիներ դրանց աշխարհագրական շառավղից և անհարկի տարրնթերցումներ ու տեղանունների արհեստական հայացումներ չէին ներմուծվի սկզբնագիր տեքստ: Սա նաև արդյունք էր հունարենի իմացություն անկման և շարունակականության խզման:

Եզրակացություն

Հունաստանում Վարազդատ թագավորի օլիմպիական հաղթանակների առնչությամբ Մովսես Խորենացու հիշատակած Արեգ քաղաքի հունարեն նախաձևը Հելիոպոլիս անվամբ որևէ քաղաքի հետ չի կարող համադրվել: Իրականում Խորենացին նկատի է ունեցել պատմական Օլիմպիային մերձակա էլիս (Իլիս) քաղաքը, որտեղ մշտապես անցկացվել են օլիմպիական խաղեր:

Ամենայն հավանականությամբ, Խորենացու սկզբնագիր տեքստում տեղանունն արձանագրվել է հունարենին հարազատ տարբերակով՝ հաշվի առնելով Բ գրքում «Իլիու քաղաք» (Հելիոպոլիս) տեղանվան առկայությունը, ինչն իր հերթին իրավամբ կարող էր արձանագրվել որպես «Արեգ քաղաք»:

Հետագա խմբագրությունների և ընդօրինակությունների ընթացքում էլիս (Իլիս) տեղանունը շփոթվել է «Հելիոսի» կամ «Իլիոսի» հետ, ըստ այդմ, իրականացվել է որոշ աղճատում և արհեստական հայացում:

Հունական նախաձևի վերականգնմամբ կարելի է արձանագրել, որ Վարազդատ թագավորը մասնակցել և հաղթող է ճանաչվել Պիսա և էլիս քաղաքներում անցկացված օլիմպիական խաղերում:

SAMVEL RAMAZYAN

**THE PROBLEM OF THE GREEK CITY “AREG”
MENTIONED BY MOVSES KHORENATS’I**

Keywords: Movses Khorenats’i, Varazdat, Areg, Heliopolis (Ilioupolis), Greece, Egypt, Lebanon, Olympic Games, Elis (Ilis).

The 5th century Armenian historian Movses Khorenats’i, when describing the participation and victories of the Armenian king Varazdat in the Olympic Games in Greece, mentions a Greek city with the Armenianized name “Areg” (“Sun”). For a long time it was considered the Armenian translation of “Heliopolis” (Ilioupolis), especially in translations into modern languages, which, however, does not correspond to reality, since there was no Olympic city with such a name in Greece itself.

An analysis of the available data leads to the conviction that Movses Khorenats’i actually meant the city of Elis (Ἐλῖς) near Olympia, in the historical region of the same name, where the Olympic Games were always held. During subsequent revisions and copying, the toponym was confused with “Ilios” or “Helios”, accordingly, some distortion and artificial Armenianization occurred.

САМВЕЛ РАМАЗЯН

**ПРОБЛЕМА ГРЕЧЕСКОГО ГОРОДА «АРЕГ», УПОМЯНУТОГО
МОВСЕСОМ ХОРЕНАЦИ**

Ключевые слова: Мовсес Хоренаци (Моисей Хоренский), Вараздат, Арег, Гелиополь (Илиуполис), Греция, Египет, Ливан, Олимпийские игры, Элис (Илис).

Армянский историк V в. Мовсес Хоренаци, рассказывая об участии и победах армянского царя Вараздата на Олимпийских играх в Греции, упоминает греческий город с арменизированным названием «Арег» («солнце»). Долгое время он считался армянским переводом «Гелиополя» (Илиуполиса), особенно в переводах на новые языки, что, однако, не соответствует действительности, поскольку в самой Греции олимпийского города с таким названием не было.

Анализ имеющихся данных приводит к убеждению, что Мовсес Хоренаци имел в виду город Элис (Ἐλῖς) близ Олимпии, в одноименной исторической области, где всегда проводились Олимпийские игры. В ходе последующих редакций и копирований топоним был перепутан с «Илиосом» или «Гелиосом», соответственно был искажен и искусственно арменизирован.